Կարգապահական գործ թիվ ԿԳ-17134

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի ապրիլի 05-ի թիվ 84-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/63-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԵՐՄԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հերմինե Ավետիսյանին (արտոնագիր՝ 803) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

22.09.2017թ. Պալատում մուտքագրվել է Սևակ Յարթուն Յարթունի Մասիհիի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում նշվել է, որ փաստաբան Հերմինե Ավետիսյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) 19.09.2017թ. իրենից ստացել է 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ ժամավճար ՀՀ ԿԱ անձնագրերի և վիզաների վարչության գտնվելու վայրը ցույց տալու համար: 20.09.2017թ. Պատասխանողը Դիմողին հրավիրել է իր փաստաբանական գրասենյակ և նրանից վերցրել է զինվորական գրքույկի, ամուսնության վկայականի, մահվան վկայականի, անձնագրի պատճենները և դրանց նոտարական թարգմանությունները, ինչպես նաև Անձնագրերի և վիզաների կողմից տրամադրված թերթի պատճենը:

Դիմողը պահանջել է վերադարձնել իր փաստաթղթերը, սակայն Պատասխանողը հրաժարվել է՝ նշելով, որ դրանք անօրինական են և դրանք վերադարձնելու համար Պատասխանողից պահանջում է 450 (չորս հարյուր հիսուն) ԱՄՆ դոլար:

Պատասխանողը խնդրում է իրեն օգնել, նշել է, որ կան իր պնդումները հաստատող վկաներ:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 20.10.2017թ. թիվ 346-Ա/ԿԳ-17134 որոշման հիման վրա փաստաբան Հերմինե Ավետիսյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագրքի)** 3.1.3 և 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը հանձնվել է փաստաբան Հայկ Պետրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

14.11.2017թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որում հայտնել է, որ Սևակ Յարթունի Մասիհին և նրա ընտանիքի անդամներին իր կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն ՀՀ քաղաքացիության ստացման վերաբերյալ, կատարվել է անհրաժեշտ փաստաթղթերի կազմում և լրացում, մատուցվել են իրավաբանական այլ ծառայություններ:

Պատասխանողը Դիմողին բազմիցս առաջարկել է կնքել պայմանագիր, բայց նա հրաժարվել է՝ առաջարկելով հետաձգել պայմանագրի կնքումը մինչև քաղաքացիության ստացման համար փաստաթղթերի մուտքագրումը:

19.09.2017թ. Դիմողը և նրա ընտանիքը քաղաքացիության ստացման համար փաստաթղթերը մուտքագրել են ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն: Նույն օրը՝ 19.09.2017թ. կողմերի միջև պետք է կնքվեր իրավաբանական ծառայությունների պայմանագիր, որի գինը նախնական պայմանավորվածությամբ կազմելու էր 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Պատճառաբանելով, որ հոգնած է՝ Դիմողը պայմանագրի կնքումը տեղափոխել է հաջորդ օրվան՝ 20.09.2017թ.: Այդ օրը Դիմողը մեկ ու կես ժամ ուշացմամբ ներկայացել է իր գրասենյակ և իր հարազատների ներկայությամբ աղմուկ բարձրացնելով՝ պնդել է, թե համաձայն չէ պայմանագրի արժեքին: Ըստ Պատասխանողի՝ պայմանագրի կնքումից հրաժարվելը, Պատասխանողի գրասենյակում աղմուկ բարձրացնելը և մնացյալ վարքագիծը պայմանավորված էր այն պատճառով, որ Դիմողը չէր ցանկանում կնքել պայմանագիր և վճարել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար:

Պատասխանողը նշել է, որ Դիմողն ստում է, որ իրեն գումար է վճարել ՀՀ ԿԱ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության տեղը ցույց տալու համար, քանի որ Դիմողը շատ լավ գիտի դրա տեղը, ավելին՝ Դիմողի հարազատ եղբայրը ՀՀ քաղաքացի է և բազմիցս եղել է Անձնագրերի և վիզաների վարչությունում:

Պատասխանողը հայտնել է, որ Դիմողին կամ նրա ընտանիքի անդամներին առնչվող որևէ փաստաթղթի պատճեն իր մոտ չկա, Դիմողի հետ պայմանագիր չի կնքվել, և Դիմողի կողմից գումար չի վճարվել, իսկ վկաները Դիմողի ընտանիքի անդամներն են, ովքեր նրան օգնում են նման վարքագիծ դրսևորելու և պարտավորություններից խուսափելու հարցում:

Պատասխանողը խնդրել է դիմումին ընթացք չտալ, քանի որ այն անհիմն է և առարկայազուրկ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 13.12.2017թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն գործի նախապատրաստման ընթացքում չի ապացուցվել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5 (3) ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հանգամանքը:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 15.12.2017թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 05.04.2018թ. ժամը 19:00-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Դիմողը դիմել է փաստաբան Հերմինե Ավետիսյանին՝ իրավաբանական օգնություն ստանալու համար.
2. Դիմողի և Պատասխանողի միջև իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր չի կնքվել:

Նշված փաստերը հաստատվում են Սևակ Յարթուն Յարթունի Մասիհիի 22.09.2017թ. Պալատ մուտքագրված դիմումով, փաստաբան Հերմինե Ավետիսյանի 14.11.2017թ. բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Հերմինե Ավետիսյանը փաստաբան է հանդիսանում 14.10.2008թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել՝ չհաշված սույն կարգապահական վարույթը:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>.

Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Հերմինե Ավետիսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 3.1.3 ենթակետի համաձայն՝ *գործն ընդունելուց հետո, եթե այն կապարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:*

Սույն դրույթի նորմատիվ էությունը կայանում է նրանում, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի բարեխիղճ, փոխադարձաբար արդյունավետ և գործարար շրջանառության էթիկայի տեսանկյունից ընդունելի գործելակերպի համար: Միևնույն ժամանակ, փաստաբանի և վստահորդի միջև կնքված գրավոր պայմանագիրը թույլ է տալիս խուսափել տարաձայնություններից կամ դրանց առաջացման դեպքում ծառայում է վեճի լուծման ապացուցողական հիմք:

Կանոնագրքի 3.1.3 կետով գրավոր պայմանագրի առումով արվում է մեկ բացառություն՝ թույլատրելով փաստաբանին վստահորդի հետ գրավոր պայմանագիր կնքել նրա՝ հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից 2 ամսվա ընթացքում, այն էլ, եթե առկա են գործի որոշ առանձնահատուկ հանգամանքներ, որոնք կամ գործի ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա:

Կանոնագրքով, մեծ կարևորություն տալով փաստաբանի և վստահորդի միջև իրավահարաբերությունների գրավոր ամրագրմանը, ցանկալի է համարվում ընդհուպ անհատույց հիմունքներով իրավաբանական օգնության ցուցաբերումը գրավոր պայմանագրի հիման վրա (3.1.5 ենթակետ): Ընդ որում, Կանոնագրքի 3.1.3 կետի շարադրանքից հետևում է, որ գրավոր պայմանագիր կնքելու պարտականությունը հստակորեն դրվում է փաստաբանի վրա: Այսինքն, եթե պատվիրատուն կամ վստահորդը չեն պնդում գրավոր պայմանագրի կնքման վրա կամ ցանկանում են փաստաբանի հետ հարաբերվել՝ առանց իրավական հիմքի, փաստաբանը պարտավոր է նրանց իրազեկել, բացատրել դրա անթույլատրելիության վերաբերյալ և հրաժարվել առանց պայմանագրի՝ նրանց իրավաբանական ծառայություններ մատուցելուց:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում չի հաստատվել է, որ Դիմողը վճարել է Պատասխանողին իրավական օգնություն տրամադրելու համար: Հետևաբար

Խորհուրդը գտնում է, որ սույն գործի շրջանակներում Պատասխանողը չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման համար:

Կանոնագրքի 3.8.5 (3) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Դիմողը նշել է, որ Պատասխանողը հրաժարվել է Դիմողին հանձնել Դիմողի կողմից Պատասխանողին հանձնված փաստաթղթերը: Միևնույն ժամանակ Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, այդ թվում՝ հանձնման-ընդունման ակտ, որը կհիմնավորի Դիմողի կողմից դիմումում նշված փաստաթղթերի հանձնումը Պատասխանողին:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*: **Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ** *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Նշված կանոններից բխում է, որ կարգապահական վարույթի կողմի կողմից մատնանշված փաստերն ու արված պնդումները պետք է հիմնավորվեն համապատասխան ապացույցներով՝ Կարգին համապատասխան: Նման ապացույցների բացակայության պարագայում սույն հանգամանքի բացասական հետևանքները կրում է այն կողմը, որը վկայակոչել է համապատասխան փաստը:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:*

Սույն պարագայում Խորհուրդը հիմնավորված չի համարում Դիմողի կողմից մատնանշված փաստն առ այն, որ Դիմողի կողմից Պատասխանողին հանձնվել են Դիմողի նշած փաստաթղթերը, քանի որ Դիմողը չի ներկայացրել այդ պնդումը հիմնավորող որևէ ապացույց:,

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 20.10.2017թ. թիվ 346-Ա/ԿԳ-17134 որոշման հիման վրա փաստաբան Հերմինե Ավետիսյանի (արտոնագիր՝ թիվ 803) նկատմամբ Կանոնագրքի 3.1.3 և 3.8.5 (3) ենթակետերի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

05 ապրիլի 2018թ.
թիվ ԿԳ/63-Ա
ք. Երևան